

ԱՐԾԱԹԵ ԵՐԿՐԻ ԴՈՒՍՏՐԸ



Ն. Մ. ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս

Լինելության լիության մեջ ոչինչ չէր տեսչում հոգիս....
Ալֆոնսինա Սթորնի

Ալֆոնսինա Սթորնի
(1892-1938)

Թարգմանության արվեստը հետաքրքիր ու բարդ արվեստ է: Այն ժողովուրդներին մշակույթների փոխառության հնարավորություն է ընձեռում: Արժեքավոր գրականություն ստեղծվում է միայն այն դեպքում, երբ այդ գրականությունն իր մեջ սինթեզել է համայն մարդկության կենսափորձը:

2010թ գրականության ոլորտում նորեկյան մրցանակը վաստակեց պերուացի հանրահայտ արձակագիր Անտոնիո Վարզաս Լյոսան: Դա լատինաամերիկյան գրականության նկատմամբ հետաքրքրության նոր խթան դարձավ: Եվ այսօր հրապարակի վրա է Ն. Համբարձումյանի կողմից կազմված 20-րդ դարի արգենտինական գրականության ամենահայտնի դեմքերից մեկի՝ Ալֆոնսինա Սթորնիի «Թռիչք մեռած հողում» բանաստեղծությունների ժողովածուն: Արժաթե երկրի այս դուստրը՝ իր ստեղծագործական նկարագրով ու հայացքներով, կարծում ենք, ուսումնասիրության հետաքրքիր նյութ կարող է դառնալ հայ ընթերցողի համար:

Ծնված լինելով Եվրոպայում՝ Շվեյցարիայում, Սթորնին վաղ մանկության ու պատանեկության տարիներից օդի հետ շնչել էր ազատության կախարդող բույրը: Սակայն հասունության տարիներին տեղափոխվեց Բուենոս Այրես ու կյանքի բարդ շրջան անցնելով՝ կայացավ որպես բանաստեղծ: Ստեղծագործական առաջին շրջանում որոնող հոգին դեռ արկածներ ու նոր տպավորություններ էր տեսչում: Նա միացավ Արգենտինայի թափառող թատերական խմբերից մեկին ու մեկնեց շրջագայության իրեն անծանոթ, բայց հայրենի երկրի անծայրածիր տարածքով: Կարծես թե կյանքն ինքը բանաստեղծուհուն հուշում էր անթեյյան այն ճշմարտությունը, թե պոետները աներևակայելի ուժ ու մտքի թռիչք են ստանում հատկապես հայրենի հողից:

**Ունաթաթերս աճում են հողի մեջ, ինչպես արմատներ,
և հյութը հողի՝ ավելի ուժեղ ու չենթարկվող,
երգում է արյանս մեջ՝ հարյուրավոր լեզուներով:
Եվ ամեն ծակոտու փոքրիկ մի դռնակը բացված է,
և թափվում են սրտիս
բանաստեղծությունների խելահեղ ծաղկաբույլերը:**

Վերադառնալով Բուենոս Այրես՝ նա զբաղվում է ուսուցչությամբ, լրագրողական գործունեությամբ: Այս գործունեության ոլորտը բազմաթիվ էր ու հետաքրքիր բանաստեղծական ու տպավորվող հոգի ունեցող երիտասարդ կնոջ համար: Նա ծանոթանում ու սիրում է իր ապագա երեխայի հորը: Սակայն սերը նրան մաքուր ու հույզերի փշրում է բերում: Նրան լքում են: Առանց օրինական ամուսնության՝ ծնվում է որդին, իսկ դա բարոյական օրենքների գերակայությունը միայն ընդունող հասարակության մեջ հալածանքի լուրջ առիթ էր: Այս հուսաբեկումները, չհասկացված ու լքված լինելու զգացողությունը հետո շատ դեպքերում որոշող է դառնում նրա պոեզիայի համար:

**...Այժմ ես բարձունքից ավելի պարզ եմ տեսնում,
Որ դու չես ինձ խաբել,
Դու չէ, այլ իմ երազն է ինձ խաբել:**

Նրա մուտքը բանաստեղծության կախարդական աշխարհ ցավից սկսվեց, կոտրված սրտի բեկորներից ծնվեցին բանաստեղծական չքնաղ տողերը /...Որքան գեղեցիկ են արշալույսները, եթե չգիտեն մայրամուտ.../: Գրականության աշխարհը հնարավորություն ընձեռեց սերտ հարաբերությունների մեջ լինել արգենտինական պոեզիայի այնպիսի ներկայացուցիչների հետ, ինչպիսիք էին Մամուել Ուգարտեն, Խոսե Ինգենիերոսը: Հետզհետե, իր համարձակ ձեռագրի ու տաղանդի շնորհիվ նա մեծ ճանաչում ստացավ մասնավորապես Արգենտինայի սահմաններից դուրս: Մեկնելով Մոնտեվիդեո՝ նա ծանոթացավ, ապա սերտ բարեկամություն հաստատեց ուրուգվայցի բանաստեղծներ Օրասիո Կիրոգայի և Խուանա Իբարբուրուի հետ: Այս շփումը ստեղծագործական մոր լիցք ու ռիթմ հաղորդեց նրա պոեզիային, և նրա գեղարվեստական ճաշակն ուղղեց դեպի մոդեռնիզմի դաշտ: Անձնական փորձ ու փորձառությամբ զինված Սթորմին բանաստեղծական ներշնչանքի այնպիսի պոռթկումներ ունեցավ, որոնք մոր էին, համարձակ, կնոջ բեկված սրտի քուրայով անցած: Սկզբնական շրջանում նրա հանդուգն, կռվազան ոճը, սկանդալային թեմաներին նախապատվություն տալը (սրանք հասարակության համար անցանկալի հնչեղություն ունեին ու անհանգստացնում էին կանոնակարգված ուղեղների խուլ հանգստությունը, դրանցից էին սեռային խնդիրները տղամարդու և կնոջ միջև, ֆեմինիստական ծայրահեղ հայացքները, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կնոջ անկապտելի իրավունքը, բացարձակ ազատության գաղափարը և այլն) նրա անունը շատ-շատերի համար ճանաչելի դարձրին՝ նրան փառք ու ճանաչում բերելով:

Ալֆոնսինան գրում էր սիրո ու ֆիզիոլոգիայի, ժամանակակից քաղաքի իրականության ու քաղաքացիական հասարակության մեջ կնոջ ազատության, հա-

սարակության լիարժեք անդամ լինելու իրավունքների ու այլ խնդիրների մասին: Կնոջ իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը նա սեփական մաշկի վրա էր զգացել, քանի որ միայնակ էր դաստիարակել ու մեծացրել որդուն՝ Ալեխանդրոյին:

Մի անգամ, իր ստեղծագործություններից մեկում, նա տղամարդկանց անվանեց *el enemigo* /թշնամի/: Ֆեմինիստական հայացքներից ելնելով՝ շատ դեպքերում Սթորնին սկեռվում էր տղամարդկանց կողմից կանանց ստորացումների ու ճնշման ենթարկելու «նորմայի» վրա, իր բանաստեղծություններում արժանացնում նրանց նման մակդիրի ու ծաղկելով նրանց երեսպաշտությունն ու կեղծավորությունը: Երբեմն դա իր կենսագրության մեջ տեղ գտած անձնական հիասթափությունների արդյունքն էր, նա մեղադրում է բոլոր տղամարդկանց՝ կանանց բաժին ընկած բոլոր ստորացումների ու ճնշումների համար:

Սև, փայլուն վարսերով գլուխը խոնարհելով՝

Ոչ երիտասարդ, գեղեցիկ կինը

Ծնկեց, և խաչված Քրիստոսը

Բարձրից խաչի

Նայեց նրան ցավակցելով:

Իսկ սրտի տակ երեխան էր. նա շուտով զավակ էր ունենալու,

Եվ այնպիսի մեծ թախիծ կար նրա աչքերի խորքում:

Եվ արտասվելով հավեց նա

Արյունոտված ոտքերին Քրիստոսի.

-Օ, Տեր Աստված, միայն աղջիկ չծնվի....

Ֆեմինիզմի հայացքներից զատ՝ նրա ուշադրության կենտրոնում են հայտնվել նաև գրականության մեջ արծարծվող այնպիսի թեմաներ, ինչպիսիք էին 20-րդ դարում կնոջ և տղամարդու միջև ռոմանտիկ հարաբերությունների սպառնալույսը /«Կատակ քառատողեր Դոն Ժուանին»/, սիրո, կյանքի ու մահվան փիլիսոփայությունը /«Դասերը»/, հոգու անսահմանության ու անմահության խնդիրները /«Մուրացկան կինը»/: Քսաներոյի դարասկզբի մեծ իրադարձությունները ստվերել էին մարդկային քնքուշ զգացումները, կինն իրեն միայնակ էր զգում, չհասկացված և բանաստեղծուհին հուսահատ ճիչով դիմում է բոլորին.

Ես հոգի եմ խնդրում, հոգի....Միայն հոգի. Ախ,

Պետք է հոգի գտնեմ աշխարհում, և նորից սիրեմ...

Ժամանակի ընթացքում, մոդեռնիզմի ազդեցությամբ, նա հրաժարվում է պոեզիայի տաղաչափական ընդունված կանոններից և ստեղծագործում ազատ բանաստեղծության էքսպերիմենտալ ձևերով: Դրանք ավելի մոտ էին նրա գեղագիտական պատկերացումներին, աշխարհընկալմանը և օգնում էին կնոջական նուրբ հոգու ծալքերում երբեմն շատ խորը թաքցնել ցինիկ աշխարհի քիմքին անհաճո ապրումները.

Օ՜ կյանք իմ. Դեպի անկուշտ անսահմանն է

**թոշում իմ ճիշդ՝ այրվելով ցանկություններից:
իմ արյան մեջ տրոփում են աստղաբույլերը,
եվ ծովերը, ծովվելով իրար, դառնում են օվկիանոս:**

Սիրո պակասը, անասնական մերկ կիրքը մարդկային հոգին դատարկությամբ են լցնում, և մարդ արարածը շնչահեղձ է լինում իր նմանների դաժանությունից: Այս թեմաները նույնքան հարազատ ու հասկանալի են հայ կնոջը, ինչպես և արգենտինուհուն: Գաբրիելա Միստրալին նվիրված «Ձոն մեռած հողին» բանաստեղծության մեջ Սթորնին ներկայացնում է ոսկու փայլից շլացած մարդկանց դաժանությունը:

**Բայց չտեսնելով, որ հարուստ է մեր աշխարհը,
եղբոր դեմ եղբայրը կանգնեց զենքով,
Սուտն ու կեղծիքը գործի անցան,
Ոսկին տիրեց սրտերը:
...Եվ հիմա, դիմակները ժանիքավոր
Պտտում ենք մեր մահացու պարի մեջ
Եվ ոչ մի տեղ, ողջ երկրագնդում
Չես գտնի ոչ մի առողջ հոգի:**

Բանաստեղծուհու և աշխարհի միջև գոյացել էր օտարացման մի ծանր մթնոլորտ, ինչը դարասկզբին իր կնիքն էր դրել մաև եվրոպացի այնպիսի նշանավոր գրողների վրա, ինչպիսիք էին Կաֆկան, Քամյուն: Սթորնին ելքը գտնում է դեպի Մեծ Սկիզբ ետ դառնալու, անեղծ ու անապական բնությանը ծովվելու բերկրանքի մեջ:

**Ես ուզում եմ
Ետ գնալ դեպի այն, ինչ նախաստեղծ է,
լինել խոտի, նորահաս ծաղիկների պես, չխորհել,
բայց հասնելով գեղեցկության ակունքներին՝
խմել հյութը և չկոտրել զրնգացող գավաթը:**

Հիշարժան է, որ Արգենտինայի գրողների միությունը հիմնադրվեց ի շնորհիվ Ալֆոնսինա Սթորնիի: Ստանալով Արգենտինայի՝ գրականության ասպարեզում երկու ամենածանրակշիռ մրցանակները (*Municipal Poetry Prize, National Literature Prize*)՝ նա 1930-ականներին վերադառնում է Եվրոպա: Եվրոպայում նա ճակատագրի բերումով հանդիպում է Գարսիա Լորկայի հետ: Այս հանդիպումն անպատմելի հետք է թողնում բանաստեղծուհու վրա: Նրա վերջին շրջանի պոեզիան ավելի մեղմ է դառնում՝ հազեցած ներքին դրամատիզմով և լիրիզմով, իսկ էրոտիկ ելևէջումները շարունակում են հուշել ցրտահար սրտի ջերմության կարոտի մասին:

**Եվ կարդացած կույսերը
այսօր իզուր կորչում են.**

**չորանում են նրանց ցանքերը,
նրանց չի հասնում հնձվորը:**

1937թ. Սթորնին սիրելի բարեկամ ու մերձավոր ընկեր Օրասիո Կիրոգայի ինքնասպան լինելու լուրն է առնում: Այն ցնցում է բանաստեղծուհուն, որին առանց այն էլ միայնությունը, անբուժելի ու կրծող հիվանդությունն ուժասպառ էին արել: Այս ամենը նրան դրդում է «*La Nación*» թերթին ուղարկել իր վերջին՝ «*Voy a dormir*» («Ես կքնեմ») բանաստեղծությունը: Այն դարձավ Ալֆոնսինա Սթորնիի հրաժեշտի երգը:

**Նվիրի ինձ, ծծմայր, գլխաշորը ցողի,
երիտասարդ ձեռքերը խոտի ու ատամները ծաղիկների,
քնքուշ մամուռը փափկացրու ներքնակի համար,
տուր ինձ հողե սավաններ:
...մի խնդրանք միայն. երբ նորից զանգի՝
դու ասա նրան՝ ես ուղղակի դուրս եմ եկել...**

Իրեն հատուկ վճռականությամբ Սթորնին ինքնասպան լինելու որոշում է կայացնում և իրագործում այն: Մար դել-Պլատայի իր հյուրանոցային համարում մի երկտող է թողնում. «Ես նետվել եմ ծովը»... Եվ կեսգիշերին, ավագի վրա թողնելով իր մենակության, հուսահատության, լքվածության ու ցավի հետքերը, քայլերն ուղղում է դեպի ծովը: Նույն օրը՝ առավոտյան, ծովափին գտնում են նրա անկենդան մարմինը: Երիտասարդ էր, բայց հոգին ծվատող ցավը, մարմինը հյուծող ախտը քամել էին նրա կենսական պաշարները: Դեռ կարող էր ստեղծագործել, անսպառ պաշար ուներ, պատկերներ կերտելու յուրօրինակ ձիրքը իմացականության ոլորտները խուզարկող հոգուն մեծ հնարավորություններ էր ընձեռում, բայց... Ալֆոնսինա Սթորնին նախընտրեց վերադառնալ դեպի Սկիզբ...

Նրա անունը հավերժացնելու նպատակով՝ Մար դել-Պլատայի ծովափին 1942թ. կառուցվեց հուշարձան, որի վրա պատկերված է դանդաղ ծովը մտնող բանաստեղծուհին: Իսկ Ֆելիքս Լունն ու Արիել Ռամիրեսը գրեցին հանրահայտ «*Alfonsina y el Mar*» («Ալֆոնսինան ու ծովը») երգը, որն առ այսօր ամենահաճախ հնչող ստեղծագործություններից է (իր երգացանկում այն ունի Լարա Ֆաբիանը, Շակիրան, Նանա Մուսկուրին, Մերսեդես Սոսան և այլք, անգամ հանրահռչակ Պոլ Մարիայի նվագախումբը ձայնագրել է դրա գործիքային տարբերակը նվագախմբի համար):

Ալֆոնսինա Սթորնիի ստեղծագործությունների նկատմամբ եվրոպական հանրությունում հետաքրքրությունն աշխուժացավ հատկապես 1970-ական թթ.: Եվ այսօր մենք լատինաամերիկյան գրականության այդ հետաքրքիր ներկայացուցչի պոեզիային ծանոթանալու հնարավորությունն ունենք:

ДОЧЬ СЕРЕБРЯННОЙ ЗЕМЛИ
(Альфонсина Сторни)

Н. М. Искандарян

Работа посвящена изучению жизненного пути поэтессы Альфонсины Сторни.

Аргентинская поэтесса А. Сторни родилась в очень бедной семье. Ценой невероятных усилий ей удалось получить образование и занять должность учительницы в маленьком городе. Там, в местной печати, появляются ее стихи. Она начала писать их с двенадцати лет. Первая книга поэтессы „Трепет роз,, (1916) вышла небольшим тиражом, но привлекла внимание читателей, и критика отозвалась о ней чрезвычайно благожелательно. Она получает различные литературные премии. Однако многолетнее внутреннее одиночество не покидало ее. Душевная борьба поглощала все силы, приводя к первым срывам, и когда ее настигла неизлечимая болезнь, Альфонсина Сторни покончила с собой, бросившись в море.

THE DAUGHTER OF SILVER COUNTRY
(Alfonsina Storni)

N. M. Iskandaryan

A. S. was born in Capriasca, Switzerland of Italian Swiss parents: At the age of eleven Storni had to support the family and began writing. At the age of twelve she toured Argentina for a year. Rosario was her first place to begin teaching. While living here she met and fell in love with a well educated newspaper journalist, who was also a provincial deputy. Despite the fact that they had a child together, Storni could not marry him because he was already married. Storni's first book was published in 1916, why she was poor, unmarried unattractive by the standard of the time. Her following collections express her frustrations with stereotypes of women. "In Tu Me Quieres Blanca" /You Want Me White/ she articulates discontent with the Spanish American men wanting women to be pure. "In Hombre pequenito" /Little Man/, she talks about the imprisonment that a woman may feel from relationships. Storni spoke on the behalf of many women suggesting that relationships between men and women be intellectual and more balanced. She urged the government to grant women the vote and wrote articles and essays on women's rights.